ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Հ._____

ք. Երևան «_____»_____2021թ.

Երևանի համայնքը ի դեմս Երևանի քաղաքապետի, որի անունից Երևանի քաղաքապետի 20__ թվականի .....-ի հ. .....-Ա որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի .....(այսուհետ՝ վաճառող) մի կողմից, ... (այսուհետ՝ գնորդ), մյուս կողմից, Երևանի քաղաքապետի 20__ թվականի .....-ի հ.....-Ա որոշման (հավելված ....) հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է գնորդին որպես սեփականություն հանձնել սեփականության իրավունքով Երևան համայնքին ……. /անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման հ. ……/……քմ, (այսուհետ՝ գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել …….. ՀՀ դրամ:

2. Սույն պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է:

3. Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին Գույքը գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման կողմից տրված ----------թ. հ. ---------- միասնական տեղեկանքի:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել գույքի օգտագործման նպատակի, չափերի, կարգի, ինչպես նաև սահմանափակումների (ներառյալ սերվիտուտները) առկայության մասին պայմանագրում առկա տվյալներին համապատասխան գույք:

2.Եթե վաճառողը գնորդին է հանձնել սույն պայմանագրի II-րդ գլխի 1-ին կետում նշված պայմաններին չհամապատասխանող գույք, ապա գնորդն իրավունք ունի հրաժարվել հանձնված գույքից և պահանջելու վերադարձնել գույքի համար վճարված գինը:

3. Գնորդը պարտավոր է ապահովել գույքի և հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը:

4. Գնորդը պարտավոր է անհրաժեշտության դեպքում իր ֆինանսական միջոցների հաշվին ապահովելու ջրագծերի, մալուխների և կոմունիկացիոն այլ հանգույցների տեղափոխման կամ ապամոնտաժման հետ կապված աշխատանքների իրականացումը։

III. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

1. Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում։

2.Գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից։

IV.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1.Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են գույքային պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

V.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքվելու, նոտարական կարգով վավերացվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը։

VI. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

1.Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը։ Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

VII ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են, կամ պայմանագիրը լուծվում է գրավոր համաձայնությամբ կամ դատարանի վճռով.

3.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկական օրինակ պահվում է կողմերի մոտ, նոտարական գրասենյակում, ինչպես նաև անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում.

4.Սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր վճարումները, այդ թվում պետական տուրքը, կատարվում են գնորդի կողմից.

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ	ԳՆՈՐԴ
Երևան, Արգիշտիի փող.1	……
.....	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ